

ԺԴ.

Աթանաս աղան կոշտ մարդ մը ճանչցուած է:

Բայց գիտէ՞ք ինչու կոշտ մարդ մը ճանչցուած է:

Աթանաս աղային կոշտ մարդ մը ճանչցուած ըլլալուն գլխաւոր պատճառը սա է, թէ Աթանաս աղան չի հաճիր, որ երիտասարդները, մանաւանդ իրեն անձանօթ երիտասարդները չափազանց մտերմութեամբ վարուին իր կնոջը հետ եւ յօժարութիւն ունենան ամէն առթիւ ծառայութիւն մատուցանել իր կողակիցին:

Պէտք չէ ասկից հետեւցնել սակայն, թէ Աթանաս աղան նախանձոտ է, կամ Աթանաս աղան կնոջը հաւատարմութեան վրայ կասկած ունի. բնաւ երբեք. Աթանաս աղային, վերջապէս, հաճոյ չի թուիր, երբ երիտասարդ մը իրմէ աւելի անձնանուիրութիւն ցոյց կուտայ իր տիկնոջը: Պատճառ: Թերեւս ինքն ալ չի գիտեր եւ թերեւս կը վախնայ իսկ պատճառ մը փնտռելու:

Եւ եղաւ, որ գիշեր մը քանի մը ընտանիքներ այ-

ցելութիւն ըրին Աթանաս աղային: Աթանաս աղան, այր հիւրասէր, ընդունեց հիւրերն այն պատուով, որուն արժանի էին: Քանի մը վայրկեան ետք դուռը զարնուեցաւ, բացուեցաւ եւ քսանըջորս տարեկան երիտասարդ մը, Աթանաս աղային անձանօթ, ներս մտաւ սենեակէն եւ երկու ծունկերը իրարու կցելով, գլուխը մինչեւ գետին խոնարհեցնելով, բարեւեց ներկաները եւ թիկնաթոռի մը մէջ ընկղմեցաւ ոտքը ոտքին վրայ դնելով:

Այս երիտասարդը, ինչպէս վերջէն հասկցուեցաւ, Աթանաս աղային տունն այցելող հիւրերէն մէկուն տունը գացեր էր եւ հոնկից տեղեկանալով, թէ Աթանաս աղային տունը գնացեր էին, պահապանի մը առաջնորդութեամբ Աթանաս աղային դուռը զարկեր էր:

Գիծ մը քաշենք հոս:— Հօրեղբայր մը ունէի, որ կ'ըսէր. «Մարդիկ կան, որ եթէ քիչ մը բարձրէն նուագարանի ձայն մը լսեն, կը հարցնեն. — «Ո՞ր կողմն է երկնից սանդուղը»: Եւ այսօր իսկ շատ կան այս կարգի մարդիկ, որոնց դասուն կը վերաբերէր նաեւ մեր երիտասարդը:— Փակենք գիծը:

Արդ, հարկ չկայ ըսելու, թէ Միհրան (այսպէս կ'անուանուէր երիտասարդը) առաջին անգամն էր, որ կը մտնէր Աթանաս աղային տունը, բայց սենեակը մտնելուն պէս այնպիսի եղանակաւ մը սկսաւ վարուիլ, որ կարծես թէ Աթանաս աղային եւ անոր տիկնոջը հետ քառասուն տարիէ ի վեր կը տեսնուէր: Այսպէս՝ հազիւ քանի մը վայրկեան մնաց թիկնաթոռի վրայ եւ ահա ոտքի ելաւ ու մօտենալով Աթանաս աղային տիկնոջը, որ աթոռի մը վրայ նստած էր.

— Կ'աղաչեմ, տիկին, — ըսաւ, — թիկնաթոռին վրայ նստեցէք:

— Հոգ չէ, հոս աղէկ եմ:

— Ոտուրնիդ պագնեմ, խօսքս մի կոտորէք, ձեր փափուկ մարմինը փայտի հանգչելու սահմանուած չէ:

— Պարո՛ն,— ըսաւ անդիէն Աթանաս աղան,— տիկինը հոն հանգիստ է, դուք նստեցէք ձեր թիկնաթոռը եւ անհանգիստ մի ըլլաք տիկնոջ համար:

— Այո՛, այո՛, հոս շատ աղէկ եմ,— յարեց տիկինը:

— Ո՛չ, ո՛չ,— ըսաւ Միհրան,— կարելի չէ, որ հոս թողում գծեզ,— եւ Աթանաս աղային կինը թեւէն բռնելով առաւ թիկնաթոռը տարաւ եւ հոն նստեցուց:

Աթանաս աղան չհաճեցաւ այս արարողութեան, բայց քաղաքավարութիւնը խնդրեց, որ իր տհաճութիւնն ինքը միայն զգայ ու գիտնայ:

Աթանաս աղան հնազանդեցաւ քաղաքավարութեան եւ բերանը չբացաւ, սակայն կը ջանար հնարք մը գտնել իմանալու համար գոնէ, թէ ո՛վ էր այն երիտասարդը եւ ինչո՛ւ եկած էր: Աթանաս աղային այս հետաքրքրութիւնը բարեբախտաբար չուշացաւ փարատիլ: Հիւրերէն տիկին մը, տեսնելով որ Միհրան Աթանաս աղային հետ իբրեւ ծանօթի մը կը վարուէր, հարցուց անոր.

— Միհրանի՛կ, շատո՞նց կը ճանչնաք Աթանաս աղան:

— Ես չեմ ճանչնար զինքը,— յարեց Միհրան,— բայց ուրախ եմ, որ ձեր շնորհիւր ճանչցայ: Զեզի գացի, տիկին, եւ սպասաւորէն իմացայ, որ հոս եկեր էք, ես ալ եկայ «մեր բարեկամներուն բարեկամները մեր ալ բարեկամներն են» ըսելով:

— Աթանա՛ս աղա,— յարեց տիկինը,— Միհրանիկը եղբօրս տղան է: Միհրանի՛կ, Աթանաս աղային հետ եղբօր պէս կը տեսնուինք, տիկինն ալ Աթանաս աղային

տիկինն է, ազնիւ տիկին մըն է, Աթանաս աղան ալ բարի մարդ մըն է:

— Շատ աղէկ,— պատասխանեց Աթանաս աղան:

— Ինքզինքս բարեբախտ կը համարեմ Աթանաս էֆէնտիին եւ իր տիկնոջը հետ ծանօթանալուս համար,— ըսաւ Միհրան եւ գրպանէն ծխախոտի տուփը քաշելով սրկարա մը հրամցուց Աթանաս աղային կնոջը:

— Շնորհակալ եմ, չեմ գործածեր:

— Տիկին, իմ ծխախոտս առաջին տեսակէն է:

— Շնորհակալ եմ:

— Առէք, կ'աղաչեմ:

— Բայց չեմ ծխեր:

— Եթէ կ'ուզէք՝ աւելի բարակ շինեմ:

— Բարակութեան համար չէ, վարժուած չեմ:

— Մի՛ մերժէք:

— Զեմ ուզեր:

— Զէ մի՛ ըսէք:

— Պարոն Միհրան, տիկինը սովորութիւն չունի ծխելու, կ'աղաչեմ մի՛ ստիպէք զինքը:

— Աթանա՛ս աղա, շատ մեղմ է իմ ծխախոտս. առէք, տիկին, առէք: Աթանաս աղա, կ'աղաչեմ, հրաման ըրէք ձեր տիկնոջը, որ չմերժէ:

— Կարծեմ ըսինք, թէ չի գործածեր:

— Կը խնդրեմ, ըսէք որ առնէ, ձեր խօսքը չի մերժեր. ծխախոտս ընտիր է, մասնաւորապէս տիկիններու համար է, անուշ է... կ'աղաչեմ, հրաման ըրէք, որ առնէ:

Տիկինը, խնդրը շերկարելու համար, կ'առնէ սրկառը:

Միհրան քիչ մը ներկաներուն խօսակցութեանը կը



խառնուի, յետոյ հայելիին առջեւ կ'երթայ եւ ձեռքով մագերը կը շտկէ: Սենեակին մէջ փոքրիկ պտոյտ մը կ'ընէ «Ճառուսթ»էն քանի մը կտորներ մոմաւով եւ նորէն կը դառնայ Աթանաս աղային տիկնոջը:

— Ա՛հ, տիկին, — կ'ըսէ, — կարմրցեր էք, եթէ նեղուեցաք՝ պատուհան մը բանամ:

— Հարկ չկայ:

— Կասկարմիր կտրեր էք, տիկին, կը քրտնիք, վերջը կը մսիք, հիւանդ կ'ըլլաք:

— Հոգ մի՛ ընէք:

— Ձէ, չէ, պիտի բանամ պատուհան մը:

— Չ'ուզեր:

Տիկինը նեղութիւն կը զգայ Միհրանին ընթացքէն: Աթանաս աղան, որ բնաւ ունկն չի դներ հիւրերու խօսակցութեան եւ միայն Միհրանը կը դիտէ, կը նեղուի նոյնպէս: Բայց ճար չկայ, համբերելու է մինչեւ որ վտանգն անցնի:

Միհրան կը շարունակէ իր ընթացքը:

— Չըլլա՞յ որ գլուխնիդ ցաւի, տիկին:

— Բան մը չունիմ, ճանրմ:

— Քովս աղէկ լաւանտա ունիմ, տամ քիչ մը ու շփեցէք ձեր ճակատը:

— Գլխու ցաւ չունիմ:

— Պարո՞ն Միհրան, չգա՞ս քովերնիս նստիլ ու խօսիլ, յոգնեցաք պտըտելով, — կ'ըսէ անդիէն Աթանաս աղան:

— Գամ պիտի, տիկինն անհանգիստ է ու քիչ մը լաւանտա տամ կ'ըսեմ: Բացէք քիչ մը, տիկին, ձեր թաշկինակը, սանկ քիչ մը դնեմ, քանի մը կաթիլ: Հոտուր-տացէք, քիչ մըն ալ քիթերնիդ քաշեցէք: Ասոր հոտը



չուտ չ'ելլար, ամիսներով կ'երթայ: Ի՞նչ անտանելի ցաւ է գլխու ցաւը, իմ գլխուս ալ եկած է տէ անկից գրտեմ:

Տիկինը, շնագանդելով ակնարկին, զոր Աթանաս աղան ըրաւ իրեն, տեղէն կ'ելլէ եւ էրկանը քով կ'երթայ կը նստի:

— Ես կ'երթամ, հօրաքո՛յր, — ըսաւ Միհրան բարկութեամբ այն կնոջ, որ քիչ մը առաջ ներկայացուցած էր զինքն Աթանաս աղային:

— Ինչո՞ւ:

— Վերջը կ'ըսեմ:

— Ի՞նչ եղար մէկէն ի մէկ, Միհրանիկ:

— Էնսիւլթ, էնսիւլթ... ես էնսիւլթի չեմ կրնար գիմանալ:

— Ի՞նչ եղաւ, ոտքդ պագնեմ, Միհրանիկ:

— Էնսիւլթ, էնսիւլթ... եւ կ'ուզեմ, որ դուն ալ հետս գաս: Ինծի էնսիւլթ հէ՞, ես մարդու զաւակ եմ, Աթանաս աղա, ընկերութեանց մէջ շատ մտած եմ: Ինծի հէ՞, էնսիւլթ հէ՞, էնսիւլթ հէ՞, ինծի պէս մարդու էնսիւլթ... վնաս չունի: Ե՛լ, սիրելի հօրաքոյրս, երթանք: Էնսիւլթ հէ՞... չուտ ըրէ... ինծի հէ՞... Շալդ գիր... ինծի էնսիւլթ հէ՞... տուներնիս երթանք... վնաս չունի, Աթանա՛ս աղա...

— Ի՞նչ ըրին քեզի, պարոն Միհրան:

— Անանկ է ես', հասկնանք գործը, — ըսին քանի մը գլուխներ, որ քիչ մը ծանր ըլլալ կը թուէին:

— Տիկինին լաւանտա պիտի տայի, որ ճակատը չփէ եւ հոտուըտայ. տիկինը մերժեց եւ ամուսնոյն քովը նստեցաւ... ասկից աւելի ի՞նչ ծանր էնսիւլթ կրնայ ըլլալ զգայուն սրտի մը:

— Ես ատոր համար չգացի, եւ եթէ լաւանտան մեր-

ժեցի, պատճառն այն էր, որ գլխու ցաւ չունէի, — պատասխանեց տիկինը:

— Տեսա՞ք մի ես, սխալ հասկացողութիւն է՞Ֆէնտիմ:

— Շատ սխալ, — յարեց Աթանաս աղան փակելու համար միջադէպ մը, որուն վրայ բառի մը արտասանութիւնն իսկ իրեն նեղութիւն կը պատճառէր:

— Դուն ալ կը նայիմ քի խենթ ես, պարոն՝ Միհրան, — պոռաց անդիէն հօրաքոյրը:

Ամէնքը խնդացին:

— Տղա՞յ ես, ի՞նչ ես, Աթանաս աղան անանկ մա՞րդ է, տիկինը էնսիւլթ ընող կնի՞կ է, խումբիի պէս կէնճ է նէ... բերան ունի՛ լեզուն չունի... թոհաֆ տղայ մըն ես... հայտէ ելէք քատրիլ մը դարձուցէք:

— Անանկ է նէ ներում կը խնդրեմ. ես շիտակը հասկցայ, որ Աթանաս աղան աչք ըրաւ եւ տիկինն ալ քովէս ելաւ:

— Հայտէ ելէք, քատրիլ մը ըրէք:

Միհրան կ'ընտրէ իր պարուհին եւ կը յայտնէ զայն:

— Մատամ Աթանաս իմ տամաս է:

Դարձեալ կրճտումն ատամանց Աթանաս աղայի: Կը սկսին քատրիլի: Աթանաս աղան, մէկ անկիւնը քաշուած, Միհրանի ոտներուն ու ձեռներուն շարժմանցը կը հետեւի աչքերով: Քատրիլին բոլոր ձեւերը կը կատարուին, կը սպառին:

Միհրան կը ստեղծէ նորանոր ձեւեր, որոնց տրամադրութեան համեմատ քաւալիւնները տամաներուն հետ անանկ շղթաներ կը կազմեն, որ աղէկ տպաւորութիւն չեն ըներ Աթանաս աղային վրայ: Շղթաները երթալով կնճուալի երեւոյթ մը կ'առնեն: Աթանաս աղան

Հաճոյք չի զգար այդ շղթաներէն, բայց Հաճոյք չզգալը չի կրնար յայտնել, վախնալով որ Էնսիւլք մըն ալ ըրած կ'ըլլայ. ուստի՝ պարողներուն ուղղելով խօսքը՝ կ'ըսէ.

— Զյոգնեցա՞ք, չյոգնեցա՞ք, հիւանդ պիտի ըլլաք. եկէք նստէք, քիչ մըն ալ խօսինք: Քատրիլն ալ բան մը ըլլայ պարի:

— Մենք չյոգնեցանք, չյոգնեցանք, — կը պատասխանեն:

— Ատ ձեւերը հեռուանց շատ տգեղ կ'երեւան կոր, քատրիլի չեն նմանիր կոր, թեւերնիդ պիտի ցաւցնէք. այսչափ խաղացիք՝ հերիք է... կենէ դուք գիտէք ամա...

— Աթանաս աղա, անհոգ եղիր, մենք չենք ցաւցըններ, չենք ցաւցներ մենք:

— Քրտնեցաք, վերջը պիտի մսիք:

— Զքրտնեցանք, չենք մսիր:

Աթանաս աղան, նկատելով որ չյաջողեցաւ այս հընարքը, հրաման կ'ընէ, որ քոնեաք բերեն: Քոնեաքը կը բերուի:

— Մէյ մէկ քոնեաք խմեցէք:

Պարողները նախ կը մերժեն, ապա, Աթանաս աղային թախանձանաց վրայ, կ'ընդունին քոնեաքը եւ այս եղանակաւ կը վերջանայ պարը:

Պարը կը վերջանայ, բայց Աթանաս աղա անձրեւէն փախչիմ ըսելով կարկուտի կը բռնուի: Միհրան Աթանաս աղային տիկինը թեւը կ'առնէ ու կը սկսին սրահին մէջ ճեմել: Աթանաս աղան կը կանչէ տիկինը: Միհրան թող չի տար, առարկելով որ քաւալիէի մը նուիրական պարտականութիւնն է իր տալման պտըտցնել, զի մի գուցէ քրտինքը պաղի եւ հիւանդութիւն բերէ:

Միհրան քառորդի մը չափ պտըտելէ ետք Աթանաս աղային տիկնոջը հետ, թիկնաթոռի մը վրայ կը նստեցնէ զայն եւ իրար կ'անցնի մուշտակ մը գտնելու եւ տիկնոջը կոնակը դնելու համար:

— Քիւրք մը, քիւրք մը, պզտիկ քիւրք մը, տիկինը չմսի... Աթանաս աղա, տիկնոջ քիւրքը ո՞ւր է...

— Սենեակը տաք է, — կը պատասխանէ Աթանաս աղան:

— Ի՞նչպէս տաք... չ'ըլլար, էֆէնտիմ, չ'ըլլար... իմ փարտըսիւս բերեմ:

Եւ իր թիկնոցը կը բերէ:

— Զեմ ուզեր, չեմ ուզեր, — կ'ըսէ տիկինը:

— Կ'աղաչեմ, տիկին, պարէն ետք զգուշութիւններ պէտք են... Ի՞նչ վնաս ունի, սանկ քիչ մը շարժեցէք, որ դնեմ կոնակնիդ:

— Թող մնայ, չ'ուզեր, չնորհակալ եմ:

Միհրան մտիկ չ'ըներ, իր կամքը կը կատարէ:

Աթանաս աղան չի գիտեր ի՞նչպէս մեկնել Միհրանին այս վարմունքը: Կը խորհի, կը դատէ, կը տրամաբանէ, բայց չ'ուզեր եզրակացութիւն մը հանել:

Մեկնելու ժամը կու գայ: Հիւրերը ոտք կ'ելլեն, «մնաք բարով»ները, «մեզի ալ հրամեցէք»ները իրարու կը յաջորդեն: Ասդին ալ Միհրան, Աթանաս աղային տիկնոջը ձեռքն ափին մէջ առած, կը թօթուէ ու կը թօթուէ զայն, հազար ու մէկ յարգանքներ արտայայտելով տիկնոջ:

— Շատ երջանիկ եղայ զձեզ ճանչնալու պատիւը վայելելուս համար, ո՞ւր էր թէ շատոնց ճանչցած ըլլայի զձեզ, տիկին, որ գեղեցիկ սեռին մէջ կը փայլիք իբր սկն պատուական. կը յուսամ, որ այսուհետեւ յաճախ

զձեզ տեսնելու բարեբախտութիւնը չպիտի զլանաք ինձ: Դուք ալ հրամեցէք հօրաբրոջս տունը, ժամանակ կ'անցընենք: Միջադէպին համար ձեր ներողութիւնը կը խնդրեմ: Վերստին տեսնուինք: Եթէ լաւանտային հաւնեցաք, շիշը հոս թողում, բայց չէ, ուրիշ մը կ'առնեմ ձեզի համար: Մնաք բարով, մեծապէս գոհ եմ այս գիշերուան զբօսանքէն: Ներեցէք, եթէ պակասութեան մը մէջ գտնուեցայ: Մնաք բարով, կը սպասեմ ձեզի... հրամեցէք... կեցէք բարեաւ:

Հիւրերը կը մեկնին, ինչպէս նաեւ Միհրան:

— Աս ի՞նչ պուլաշըխ գեւզէկ է եղեր, — կ'ըսէ Աթանաս աղան տիկնոջը, հիւրերուն մեկնելէն ետք:

— Դուն ալ կը նայիմ, որ թոհաֆ մարդ մըն ես. պուլաշըխ է նէ մեզի՞ ինչ, պոշ բաներու համար սիրտ կը հատցնես:

— Ըրածները վայլո՞ւն բաներ էին:

— Է՛, ի՞նչ ըրաւ չոճուխը, գլուխնի՞ս ելաւ նստեցաւ. քիչ մը գեւզէկ է եղեր, ի՞նչ ընենք:

— Կը նեղուիս կոր տէյի բարկացայ ես:

— Է՛, քիչ մը նեղուեցայ առջի բերան, բայց վերջը վարժուեցայ:

— Ո՛չ խիպ ունի, ո՛չ ամօթ:

— Խիպի, ամօթի բան չկայ հոս, չեմ հասկնար ինչո՛ւ. այսչափ կը բարկանաս:

— Անոր համար բարկացայ, որ քեզի սըխընթը կու տայ կոր, չէ նէ ինչո՛ւս պէտք իմին... բայց կը վայլէ՞ որ երիտասարդ մը ուրիշի կնոջը հետ այսչափ թէքլիֆ-սիզ տեսնուի... տեսնողները ծուռ միտքի կը տանին: Ես ալ եթէ ուրիշի մը կնոջ հետ անոր այսպէս վարուելը տեսնամ, ի՞նչ մեղքս պահեմ, կը գայթակղիմ:

— Պարի տղան մտքէն անցընէ՞ անանկ բան մը... .

— Սանքի ուրիշի կնոջ մը հետ այսպէս վարուելը տեսնամ նէ կ'ըսեմ կոր ես, դուն չհասկցար... բայց ինչ որ ալ ըլլայ՝ վայլուն բան չէ:

— Պոշ խօսքե՛ր... .

Աթանաս աղան խնդիրը փափուկ կը գտնէ եւ կը լռէ:

Հետեւեալ գիշերը Աթանաս աղան եւ իր տիկինը կ'ընթրէին: Յանկարծ Միհրան երեւցաւ անոնց.

— Բարի իրիկուն, տիկին, բարի իրիկուն, Աթանաս աղա, ձեզի առնելու համար եկայ. այս գիշեր հօրաբրոջս տունը պիտի երթանք քիչ մը ժամանակ անցընելու:

— Շնորհակալ եմ, բայց ժամանակ չունիմ այս գիշեր, — պատասխանեց Աթանաս աղան:

— Անկարելի է, մինչեւ որ ձեզի չառնեմ, չեմ երթար:

— Սարսափելի սանճի մը ունիմ:

— Ատ ուրիշ:

— Այո՛, սարսափելի սանճի մը:

— Իրաւունք ունիք:

— Այո՛, սարսափելի սանճի մը:

— Ատոր ըսելիք չունիմ:

— Այո՛, սարսափելի սանճի մը, ի՞նչ է չիյտեմ:

— Հանգիստ ըրէք ուրեմն այս գիշեր:

— Այո՛, սարսափելի սանճի մը, նստելու իսկ ժամանակ չունիմ, երթամ պառկիմ պիտի, սարսափելի սանճի մը:

— Գացէք պառկեցէք, ես տիկինը կ'առնեմ կը տանիմ, հոգ մի ընէք, վերջն ալ կը բերեմ. Աթանաս աղա, դուն հանգիստդ նայէ:



— Ան ալ չի կրնար գալ, ան ալ սարսափելի գլխու ցաւ ունի:

— Դուրս ելլալուն պէս գլխու ցաւը կ'անցնի:

— Չ'անցնիր:

Տիկինը ձեռնպահ է:

— Գոնէ տիկինը առնեմ տանիմ:

— Չ'ըլլար:

— Իլլէքի պիտի տանիմ, որոշուած է: Կը սպասեն կոր նէ...

«Խրկար»ի էջերը չեն բաւեր, եթէ պատմել սկսինք Միհրանին թախանձանքը, Աթանաս աղային բարկութիւնը եւ տիկնոջ անտարբերութիւնը. ուստի փութանք յայտնելու, թէ Աթանաս աղան, ճարահատեալ, ստիպւեցաւ համակերպիլ Միհրանին հրամանց:

Միհրան մեծ փոյթ եւ եռանդ ցոյց տուաւ, Աթանաս աղային տիկնոջ թուալէքի միջոցին ետեւէն հայելի բարձրացուց, վերարկուն բռնեց, որ հագնի, կօշիկները հագցուց եւ անոնց կապերը կապեց: Աթանաս աղան չճաթեցաւ: Միհրան փողոցն ալ հոգ տարաւ, որ տիկինը ցեխոտ տեղեր չկոխէ, շատ անգամ թեւը մտաւ, քանի մը անգամ ձեռքէն բռնեց եւ ջուրերու հոսանքէն անցուց ցատկեցնելով զայն: Աթանաս աղան ալ ինքզինքը հոսանքին տուած կը հետեւէր անոնց, իր անձին երեք քառորդը ուտելով:

Վերջապէս հասան Միհրանին հօրաքրոջը տունը. Միհրան ուզեց Աթանաս աղային տիկնոջ լաւքիքները հանել:

— Ի՞նչ կ'ընէք, պարո՛ն Միհրան, թող տուէք, որ հանէ լաւքիքները, զահմէթ մի՛ ընէք, շնորհակալ ենք, — ըսաւ Աթանաս աղան վերջին բառերը շեշտելով:

— Ի՞նչ վնաս ունի, էֆէնտիմ, մեր պարտականութիւնն է:

— Բնաւ ձեր պարտականութիւնը չէ, կ'աղաչեմ, ինքը թող հանէ:

Տիկինը հանեց լաւքիքները ու վեր ելան:

Տան տէրերն ու հիւրերը բարեւներ փոխանակեցին իրարու հետ, յետոյ սկսան խօսակցիլ այլեւայլ նիւթերու վրայ, քանի մը տիկիններ ու օրիորդներ բամբասեցին, յետոյ քիչ մը երգեցին, քիչ մըն ալ պարեցին — Աթանաս աղային տիկինը չպարեց — եւ վերստին սկսան խօսակցութեան:

Պէտք չէ մոռնալ սակայն, թէ Միհրան մերթ ընդ մերթ Աթանաս աղային տիկնոջ քովը կ'երթար եւ ձեռքերը շփելով այնպիսի շարժումներ կ'ընէր, որոնք կըրնային թարգմանուիլ այսպէս. «Պատրաստ եմ ձեզի ծառայելու»: Տիկինն ալ ժպտով մը կը պատասխանէր. «Պէտք չունիմ ձեր ծառայութեան»: Իրերն այսպէս կը շարունակուէին, երբ յանկարծ պզտիկ միջադէպ մը իրաց վիճակը ծանրացուց:

Միհրանին հօրաքոյրը, որ Միհրանին քով նստած էր բազմոցի մը վրայ, հրաւիրեց Աթանաս աղային տիկինն, որ իր քովը նստի: Տիկինն ընդունեց հրաւէրը, բայց տեղը քիչ մը նեղ էր: Ամուսիններ կան, որ չեն ուզեր իրենց կանանց նեղ տեղեր նստիլ. ուստի՝

— Անհանգիստ եղաք հոն, պարո՛ն Միհրան, — պոռաց Աթանաս աղան տեղէն ելլելով. — եկէք իմ տեղս նստեցէք:

— Կ'աղաչեմ, Աթանաս աղա, ոտքդ պագնեմ, արեւը սիրեմ, անհանգիստ չեմ, շատ աղէկ եմ հոս, նստեցէք տեղերնիդ:

— Իրաւ, նեղեցի ձեզի, պարոն Միհրան, — յարեց Աթանաս աղային տիկինը:

— Ամենեւին, Աստուած վկայ որ չնեղեցիք զիս. հօրս հոգւոյն վրայ կ'երդնում, որ շատ հանգիստ եմ, կէնծութեանս խէրը չտեսնամ թէ որ հանգիստ չեմ. ինչո՞ւ պարապ խօսքեր կ'ընէք: Աստուածդ սիրես, նստէ տեղդ, Աթանաս աղա, չէ նէ մէյ մըն ալ երեսդ չեմ նա-յիր:

— Ինչո՞ւ սիրտ կը հատցնէք, Աթանաս'ս աղա, նեղ-ւի նէ թող ելլայ, տղայ չէ եա':

— Իրաւ որ նեղեցի, ես կ'ելլեմ, — ըսաւ Աթանաս աղային կինը ու ելաւ էրկանը քով նստաւ:

— Տեսա՞ք մի, դարձեալ էնսիւլք. էնսիւլք է այս ինծի, — պոռաց Միհրան:

— Աթանաս'ս աղա, իրաւ որ այս քիչ մը էնսիւլք է, — կրկնեցին քանի մը տիկիններ:

— Էնսիւլքի ի՞նչ կայ, — հարցուց Աթանաս աղան:

— Ի՞նչ էնսիւլք, — կրկնեց Աթանաս աղային տի-կինը:

— Մենք գիտենք եա', բայց մեր տունը պատուաւոր է:

— Քանափէին վրայ երեք հոգի նստեր էին, տեղ չկար, տիկինը քիչ մնաց որ Միհրանի ծունկին վրայ պիտի նստէր եւ նեղէր պիտի տղան:

— Թող նեղէր, քեզ չպիտի նեղէր ա', անոր ծուն-կին վրայ պիտի նստէր, տղայ չէր ա', թող ելլէր թէ որ ծունկը ցաւէր... ասանկ բաներ չի վայլեր, Աթանաս աղա, ձեր ըրածը ամենուս ալ կը դպչի, ներեցէք:

— Բայց բան մը չըսինք կարծեմ:

— Կարծեմ թէ էնսիւլքի բան մը չեղաւ, — ըսաւ

Աթանաս աղային տիկինը՝ ուժ տալով իր էրկանը:

— Եթէ չըրիք, կու գաք նորէն քովս կը նստիք, որ մենք ալ հասկնանք, թէ էնսիւլք ըրած չէք, — ըսաւ Միհ-րանին հօրաքոյրը:

— Հարկ չկայ ա'լ, երթանք պիտի:

— Տիկի'ն, քիչ մը նստեցէք, որ սա խօսքը գոցուի:

Տիկինը կ'երթայ քանի մը վայրկեան կը նստի, այս անգամ Միհրանին հօրաքոյրը տալով մարմինն ծանրու-թեան մէկ մասը:

— Այսչափ ալ լրբութիւն կենացս մէջ տեսած չու-նէի, — ըսաւ Աթանաս աղան ինքնիրեն:

— Էնսիւլքի խնդիրն ալ վերջացաւ, — ըսաւ Միհ-րան եւ տեղէն ելաւ:

Քանի մը տիկիններ փսփոսացին իրարու.

— Աթանաս աղային համար կոշտ է կ'ըսեն նէ իրա-ւունք ունին եղեր:

— Է՛՛հ, երթանք, — ըսաւ Աթանաս աղան եւ ոտքի ելաւ:

Տիկինն ալ «մնաք բարով»ները լմնցուց եւ էրիկ կնիկ դուրս ելան:

— Տեսա՞ր մի խայտառակութիւնը:

— Ինչո՞ւղ պէտք:

— Վրան նստելու պէս կ'ընես կոր տէ տեղէն չ'երե-րար սրիկան:

— Չէ, ճանըմ, չէ, սրիկայ չէ, միամիտ է:

— Միամիտ է մի, լիրբին մէկն է:

— Տեսա՞ր, որ անանկ չէ գործը:

— Անանկ չէ տէ ի՞նչպէս է գործը:

— Ատ գեղգէկին ո՞վ կարեւորութիւն կու տայ, գա-ցի նստեցայ, չըջագեաստ ծունկին դպաւ քիչ մը, ի՞նչ



վնաս ունի, ո՞վ կը սեպէ ան թեթեւը. բայց դուն մէկէն ի մէկ խուլլանմիչ կ'ըլլաս, պարապ տեղը խօսք կը հանես:

— Միամիտ է եղեր...

— Միամիտ է եա':

— Ես անանկ միամտութենէն չեմ արտօրի եւ .

մըն ալ դուռ չեմ բանար այդ անառակին:

Արդարեւ, կան կանայք, որ միամտութեան կը վերագրեն ամէնէն աւելի յստակ եւ զուտ անառակութիւնները, բայց Աթանաս աղային տիկինը կանանց այս դատուն չի վերաբերիր, միայն թէ առանց գիտնալու թեթեւ հաճոյքներ կը պատճառէ երբեմն ուրիշներուն, բայց երբ կը համոզուի, թէ դիմացիներն միտքը ծուռ է, անմիջապէս կը սկսի զգուշանալ: Այս անգամ կը համաձայնի Աթանաս աղային՝ իր տանը դուռները փակել Միհրանին, որ դեռ կը շարունակէ շաբաթը երկու երեք անգամ անոնց դուռը զարնել:

Աթանաս աղան որոշած է, կ'ըսեն, Միհրանին գըլուխն ի վար ջուր թափել պատուհանէն, եթէ օր մըն ալ իրենց դուռը ասի առնէ: Եւ տուչը ո՛չ էնսիւլթ է եւ ոչ ալ քաղաքավարութեան հակառակ:

— Բարի էք եկեր, Բարսեղ աղա, ո՞ր հովը փչեց  
զձեզ դէպի մեր գիւղը:

— Պզտիկ այցելութիւն մը ունէի ընելու:

— Ընելու է, ընելու է... երբեմն երբեմն այցելու-  
թիւն ալ ընելու է... շատ աղէկ, շատ աղէկ... այս գի-  
շեր հո՞ս էք:

— Ոչ, կտոր մը հաց ու պանիր կերայ հոս, պիտի  
դառնամ, որովհետեւ տունը մինակ են:

— Դառնալու է, դառնալու է, քանի որ տունը մի-  
նակ են, ես ալ ըլլամ նէ կը դառնամ:

— Դուրս մնալու սովորութիւն չունիմ:

— Ունենալու չէ, ունենալու չէ, դուրս մնալու սո-  
վորութիւնը աղէկ սովորութիւն մը չէ:

Այս խօսակցութիւնը, որ նոր սկսած էր Պոլսոյ թա-  
ղի մը նպարավաճառ-գինետան մէջ, երեկոյեան ժամը  
տասնըմէկին, ընդմիջուեցաւ երիտասարդի մը կողմէ,  
որ գինետունը մտնելով Բարսեղ աղային վազեց եւ անոր  
ձեռքը թօթուելով.

— Ի՛նչ բախտ, ի՛նչ բարեբախտութիւն, ի՛նչ եր-  
ջանկութիւն, — ըսաւ, — այս իրիկուն զձեզ հոս գտնե-  
լը:

— Բախտ է հապա՛, բարեբախտութիւն է հապա՛,  
երջանկութիւն է հապա՛, — կրկնեց Բարսեղ աղայի ա-  
ռաջին խօսակիցը, որուն անունը Գաբրիէլ էր կարծեմ:

— Պզտի՛կ, սըկէ չի՜ մը օղի բեր մեզի, — պոռաց  
նորեկը:

Յետոյ Բարսեղ աղային դառնալով.

— Իրիկուն է, — ըսաւ, — քանի մը հատ կը խմուի:

— Կը խմուի, կը խմուի, — կրկնեց Գաբրիէլ աղան:

— Ես օղի խմելու սովորութիւն չունիմ, — պա-  
տասխանեց Բարսեղ աղան:

— Մէկ երկու հատը չի վնասեր:

— Երկու հատը բան մը չ'ըներ:

Գինետան սպասաւորը բերաւ օղին եւ անոր վերա-  
բերեալ աղանդերը:

— Ասանկ հէ՞օ, Բարսեղ աղա. կեցիր ձեռքովս հատ  
մը հրամցնեմ ձեզի:

— Հրամցնելու է եա՛, հրամցնելու է եա՛... Բար-  
սեղ աղան մերն է:

— Ես չեմ կրնար խմել, ներեցէք

— Շատ պիտի չխմենք:

— Գիտեմ, բայց խմած չունիմ:

— Մի՛ մերժէք, կ'աղաչեմ:

— Չեմ կարող խմել:

— Հատ մը, չեա թունաւորուիր:

— Մէկ հատը չի թունաւորեր:

— Զի թունաւորեր, բայց վարժուած չեմ, խելքս  
կը դառնայ:

— Միհրանի՛կ, մի՛ ստիպեր, խելքս կը դառնայ  
կ'ըսէ կոր:

— Այս օղին թեթեւ է:

— Բարսեղ աղա, հատ մը խմէ, այս օղին թեթեւ է կ'ըսէ կոր:

— Ոտուրներդ պագնեմ, մի' ստիպէք:

— Անանկ է նէ մի' ստիպեր, Միհրանի'կ, ոտուրներդ պագնեմ կ'ըսէ կոր:

— Մէկ հատով ի՞նչ կ'ըլլայ, եղբայր:

— Ան ալ շիտակ է, Բարսեղ աղա, դուն ալ հատ մը խմէ, մէկ հատով մարդ չի մեռնիր:

— Կարող չեմ տանելու նոյնիսկ մէկ կաթիլը:

— Միհրանիկ, ա'լ կարճ կապէ, մէկ կաթիլն անգամ խմելու կարող չէ եղեր:

— Մէկ գաւաթը ախորժակ կը բանայ, օգտակար է:

— Եկուր, Բարսեղ աղա, գաւաթ մը խմէ, ախորժակ կը բանայ:

— Զկըցինք հասկցնել ձեզի, ներութիւն կու գայ կոր վրաս:

— Միհրանիկ, ա'լ կրկնելու չէ:

— Ըսել է, որ մեր բարեկամութիւնը կեղծ է եղեր, Բարսեղ աղա:

— Այդ խօսքը չեմ ընդունիր:

— Զ'ընդունիր ա', Բարսեղ աղան անանկ մարդ չէ:

— Վնաս չունի, գաւաթ մը օղիին համար այսչափ դէ'մ դնել... շիտակը չէի յուսար. թող անանկ ըլլայ: Թոյն ըլլար նէ բարեկամութեան սիրոյն համար մարդ կը խմէր:

— Բարսեղ աղա, գաւաթ մը խմեցէք, որ վերջանայ խնդիրը:

Բարսեղ աղա կը հարկադրուի խմել եւ երեսը ծռումը տակելով՝

— Ինտո՞ր ալ կը խմեն, — կ'ըսէ ինքնիրեն, — կար-

ծես սիրտս էրեց:

— Զուկէն չառնէի՞ք կտոր մը, Բարսեղ աղա:

— Կ'առնեմ, պարոն Միհրան:

Երեք բարեկամները սկսան ազգային վարժարանաց վրայ խօսակցիլ: Յայտնի է, թէ մեր մէջ մէկ կամ երկու գաւաթ օղի խմուելուն պէս խօսակցութիւնը ազգային վարժարանաց վրայ կը դառնայ: Զանոնք բարեկարգելու համար երեքն ալ մէյմէկ տարբեր ճամբայ ցոյց տուին: Երեքն ալ իրարու ճամբաները սխալ գտան, գիրար համոզել աշխատեցան, չյաջողեցան, յուսահատեցան:

Միհրան չիչը առաւ եւ սկսաւ գաւաթները լեցնել:

— Ա'լ չեմ խմեր, — պոռաց Բարսեղ աղա, — կ'ելլեմ կ'երթամ:

— Բարսեղ աղա, խնդիր մի' յարուցաներ, Աստուածդ սիրես, ամէն գիշեր կը խմենք կոր սըւիկա եւ, փառք Տիրոջը, երկաթի պէս եմ, քեզմէ ալ քաջառողջ եմ: Բանն ան է, որ մարդս տկար չստեղծուի, չէ նէ օղիէն մեռած մարդ չկայ:

— Վարժուած չեմ կ'ըսեմ կոր, եղբայր:

— Վարժուէ քիչ մը, ի՞նչ կ'ըլլայ:

— Զէ, չէ, չէ, չեմ կրնար խմել:

— Մէկ հատ մըն ալ, լմնցաւ գնաց:

— Այս գաւաթն ալ կը խմեմ, ուրիշ չեմ խմեր:

— Մի' խմեր:

Երեք բարեկամները իրարու կենաց խմեցին:

— Մեծապէս շնորհակալ եմ, Բարսեղ աղա, որ խօսքըս չկոտրեցիր, — ըսաւ Միհրան պատառաքաղով կտոր մը ձուկ երկնցնելով Բարսեղ աղային, որ օղին վար իջեցնելու կ'աշխատէր:



— Բարսեղ աղան սիրտ կոտորող մարդ չէ, — աւելցուց Գարրիէլ աղան:

Եւ շիշը ջուրի բաժակին զարնելով՝

— Պզտի՛կ, լեցուր սա շիշը, — պոռաց:

— Ատ ի՞նչ է... մնաք բարով, ես կ'երթամ:

— Կ'երթա՞ք, — ըսաւ Գարրիէլ աղան լուրջ դէմքով մը, — շիտակը աս չվայլեցուցի ձեզի, Բարսեղ աղա:

— Ինչո՞ւ:

— Ըսել է, թէ ես պարզապէս շողոքորթ մըն եմ հոս, որ ուրիշին ստակով օղի խմելու եկած եմ. ես բնաւորութիւն մը ունիմ, որ ինծի մէկ խմցնողին չորս կը խմցնեմ:

— Ես չխմցուցի:

— Դուք հիւր էք եւ որովհետեւ մեր թաղը գտնուած էք, մեր պարտքն է զձեզ յարգել մեր կարողութեան չափ: Կը խնդրեմ, տեղերնիդ նստեցէք:

— Գարրիէլ աղան իրաւունք ունի, ի՞նչ ըսեմ:

— Մեր գիտցածը սա է, որ մարդ մը իր բարեկամաց թաղին մէջ գտնուի նէ ինքզինքը իր բարեկամաց տրամադրութեան տակ կը դնէ:

— Գիտեմ, բայց...

— Հրամեցէք, — ըսաւ Գարրիէլ աղան օղիի գաւաթը Բարսեղ աղային երկնցնելով:

— Շնորհակալ եմ, — պատասխանեց Բարսեղ աղան ակամայ ընդունելով գաւաթը:

Յետոյ գաւաթները պարպեցին իրարու կենաց:

Բարսեղ աղան, որուն աչքերը կարմրիլ սկսած էին, հազիւ յաջողեցաւ ըմպել երրորդ գաւաթը, հազար անգամ անիծելով այն այցելութիւնը, որուն պատճառաւ հանդիպած էր այս փորձանքին:

— Ձեռ կրնար խմել հա՞... ի՞նչ սատանայ ես դուն, մեզմէ աղէկ կը խմես կոր. եւ ինչո՞ւ չխմես, կնի՞կ ես, աղբար... Թող որ կնիկները հիմա մեզմէ շատ կը խմեն կոր:

— Ա՛լ ըսելիք չունիմ, որովհետեւ չէք հաւտար կոր: Ժամը քանի՞ եղաւ արդեօք:

— Հոգ մի՛ ըններ, քանի ըլլայ նէ ըլլայ. ձի կայ, կառք կայ, թրամուէյ կայ:

Գիտենք արդէն, թէ մեր մէջ երբ երեք չորս օղի խմուի, «խնդրոց կարգ»ին երկրորդ խնդիրը կ'ըլլայ թաղականներու ընթացքը. ուստի երեք բարեկամները ձեռք առին այս խնդիրը, որուն վրայ եւս քառորդի մը չափ վիճաբանեցան, առանց զիրար հասկնալու, — անմե՛ղ վիճաբանութիւն: Միայն թէ Բարսեղ աղան, որուն, ինչպէս կ'ըսեն, գլուխը ցատկած էր օղին, կիրքով կը խօսէր: Երբ կարգը չորրորդ գաւաթին եկաւ, Բարսեղ աղան, որուն գլուխը դառնալ սկսած էր, ընաւ ընդդիմութիւն չըրաւ, հաճութեամբ խմեց եւ սկսաւ ցած ձայնով «սֆահան»ի վրայ հին «պեսթէ» մըն ալ երգել:

— Կը լսե՞ս կոր, պարոն Միհրան, ի՞նչ աղուոր կ'երգէ կոր Բարսեղ աղան:

— Սքանչելի:

— Բարսեղ աղայէն չէի յուսար ասանկ հրապուրիչ ձայն մը:

— Ես ալ չէի կարծեր, որ Բարսեղ աղան այսքան աղուոր ձայն մը ունի:

Բարսեղ աղային հաճոյ թուեցան բարեկամներուն այս խօսքերը. ծիծաղեցաւ, Միհրանիկը շոյեց եւ Գարրիէլ աղային ուսին զարկաւ: Յետոյ վրան «երկար»

դրուած զգայնական ձայնարկութիւն մը արձակեց եւ սպասաւորը կանչեց, որ շիշը լեցնէ:

— Շատ կ'ըլլայ, Բարսեղ աղա, — ըսին բարեկամները:

— Ես չհրամցնե՞մ:

— Շատ լաւ, կ'ընդունինք:

— Անանկ ալ եղաւ, անանկ ալ, շիշ մըն ալ կը խըմենք կ'երթանք, ուշ մնացի:

— Երթալու համար դեռ կանուխ է. ձի կայ, կառք կայ, թրամուէյ կայ, — ըսաւ Միհրան:

— Այո՛, այո՛, ձի կայ, կառք կայ, թրամուէյ կայ, — կրկնեց Գարրիէլ աղան:

Երրորդ շիշն ալ խմեցին: Օղիի շոգին զուարթացուցած էր Բարսեղ աղան. մինչեւ ականջները կաս կարմիր կտրած՝ շարունակ կը խնդար եւ կը խօսէր: Նստած տեղը երկու կողմը կ'երերար, հաւասարակըչ-ուռութիւնը կորուսած էր, սակայն խելքը գլուխն էր եւ կ'աշխատէր այնպէս ցոյց տալ, թէ ինք իր կամօքը կ'երերար:

— Միսաք աղայէն, — ըսաւ սպասաւորը, շիշ մը օղի դնելով ասոնց սեղանին վրայ:

— Քովերնիս եկուր, Միսա՛ք աղա, — պոռաց Բարսեղ աղան:

Միսաք աղա իր օղիին շիշն ու գաւաթը առնելով եկաւ:

— Միսաք աղա, աս իրիկուն ալ ասանկ եղաւ, մեր բարեկամները մեզի օղի խմցուցին:

— Շատ աղէկ ըրին, աշխարհս ունայն աշխարհ մըն է, բարեկամներու հետ խնդաւու, զուարճանալու է:

— Խմենք ուրեմն:

Չորրորդ շիշն ալ պարպեցին: Այնուհետեւ «Հատ մըն ալ ինէ, չէք մերժեր ա՛» ըսելով չորսն ալ վերըստին մէյ մէկ շիշ բերել տուին եւ բաւական տաքցուցին իրենց գլուխները: Հինգերորդ շիշէն ետք Բարսեղ աղան հեծկլտալով կը զբաղէր: Վեցերորդին, յ' չնկարելով նստիլ, ընկողմանած էր: Եօթներորդ եւ թերրորդ շիշերուն ձեռնպահ մնաց:

Ժամը գիշերուան երկուքին կը մօտենար: Միհրան սպասաւորը կանչեց, խմուած օղիին հաշիւը հարցուց: Գարրիէլ աղան խնդրեց, որ կէսուակէս վճարուէր: Միհրան մերժեց եւ հաշիւը մաքրեց:

— Բարսեղ աղան ի՞նչ ընենք, — ըսաւ Գարրիէլ աղան, — տունը հիւանդ չունենայի նէ տունս կը տանէի: Տունս մօտ ալ է, դիւրութեամբ կ'ըլլար:

— Գիտէք, որ ասանկ բաներէն չեմ փախչիր ես, — յարեց Միհրան, — բայց ի՞նչ ընեմ, որ պառկեցնելու սենեակ չունիմ:

— Շիտակը ես կ'առնէի տունս կը տանէի, — յարեց Միսաք, — եթէ այսօր տախտակ չփած ու յոգնած չըլլային տունը:

— Բարեկամ մը տուն տանիլը բա՞ն մըն է, բայց եկուր տես, որ հիւանդ ունիմ տունը:

— Զախորդութիւն... ի՞նչ կ'ըլլար թէ որ սենեակ մը աւելի ունենայի:

— Մերիններն ալ այսօր ելեր են տախտակ չփելու:

— Սենեակ մը աւելի ունենայի նէ...

— Զէ՞ք կրնար մէկտեղ պառկիլ:

— Կարելի՞ է... դուք կրնաք տանիլ, տախտակները չփուած են եղեր, ի՞նչ վնաս ունի:

— Իրաւունք ունի Միհրան:

- Դուք տարէք, աղբար, հիւանդին ի՞նչ չարիք կրնայ հասցնել խեղճը, ձեր տունը մօտիկ ալ է, հոս է:
- Փափուկ կէտ մը կայ... ամէն բան չ'ըսուիր:
- Մնաք բարով, — ըսաւ Միհրան եւ մեկնեցաւ:
- Գիշեր բարի, Գարրիէլ աղա:
- Երթաք բարով:

Գարրիէլ աղա գինեպանին յանձնարարեց Բարսեղ աղան եւ աղաչեց, որ պառկելու համար տեղ մը պատրաստէ անոր: Գինեպանը խօսք տուաւ, որ հարկ եղած խնամքը կը տանի իր հիւրին:

Երբ պարպուեցաւ գինեստունը, գինեպանը Բարսեղ աղային քովը գնաց, որպէս զի ձայն տայ անոր եւ վերի յարկը տանի պառկեցնելու. իսկ երբ գարշելի հոտ մը առաւ եւ երբ տեսաւ, որ Բարսեղ աղային դէմքը թաթխուած էր դեղին բաղադրութեամբ մը, որուն մէջ կը տեսնուէին վարունգի, ձուկի կտորներ, ծամուած լուբիայի խմորներ, ետ ետ գնաց գանելով, սպասաւորը կանչեց:

— Բռնէ սրտը ոտքերէն, — հրամայեց:


Սպասաւորը վեր առաւ Բարսեղ աղային ոտքերը, ինքն ալ ձեռքերէն բռնեց եւ մէկէն ի մէկ թողուց պոռալով:

— Գարշելի՛ մարդ...:

Բարսեղ աղային թեւերն ու ձեռքերն ալ ձեփուած էին այդ գարշահոտ բաղադրութեամբ:

Սպասաւորը հրամանի կը սպասէր, Բարսեղ աղային ոտքերը բարձրացուցած:

Գինեպանը, քիթը բամպակով թխմելով եւ ձեռքերը ջնջոցով փաթթելով, Բարսեղ աղային ձեռքերէն բռնեց: Վերցուցին Բարսեղ աղան եւ գինեստունէն դուրս ելլելով փողոցի մը անկիւնը ձգեցին: Մէկուկէս ժամու չափ





խորդաց Բարսեղ աղան եւ յետոյ ինքզինքը կանգուն գտաւ պատին կոթնած եւ ղէմը մարդ մը, որ ձեռքով զինքը բռնած կը հարցնէր․

— Որո՞ւ հետ էիր:

— Անոր հետ:

— Ան ո՞վ է:

— Ան․․․

— Անո՞ւնը:

Ձայն չկայ․ Բարսեղ աղան չէր կրնար աչքերը բանալ, ոտքի վրայ կը քնանար, գլուխը կուրծքի՝ հակած:

Գիշերապահն մեծ դժուարութեամբ յաջողեցաւ Բարսեղ աղային բերնէն յափշտակել Գարրիէլ անունը:

— Գիտեմ, գիտեմ, — ըսաւ գիշերապահը:

Յետոյ․

— Քալէ նայիմ հետս:

Անշուշտ դիւրին չէր Բարսեղ աղան այդ վիճակին մէջ Գարրիէլ աղային տունը տանիլ, բայց գիշերապահը, ի սէր մարդկութեան, յանձնառու եղաւ ամէն դժուարութեանց եւ յաջողեցաւ Բաքոսի այս տկար աշակերտը յանձնել Գարրիէլ աղային, որ ապշած ստիպուեցաւ ընդունիլ այս հիւրը եւ իր սենեակը տանիլ պառկեցընել:

Քանի մը ժամ ետք Բարսեղ աղան արթնցաւ: Մարաւ էր: Հասկեցաւ, որ իր տունը չէր: Կանգնեցաւ, խաբխափելով գտաւ սեղանը․ լեցուն բաժակ մը ձեռքը անցաւ, խմեց զայն ի մի ումպ, երեսը քիչ մը թթուեցուց եւ պառկեցաւ վերստին: Առաւօտուն կանուխ արթնցաւ: Չհանուած պառկած էր: Տեսաւ, որ բարձը, որուն վրայ դրած էր գլուխը, եւ վերմակին վերի կողմը ղեղնած էին: Թիկնոցին թեւերուն, բաճկոնակին նայեցաւ․

կարմրեցաւ: Ընչացքը շտկել ուզեց, ձեռքերը օտար նիւթերու դպան: Ձեռքերը գլխուն զարկաւ: Չհամարձակեցաւ արթնցնել Գարրիէլ աղան․ վար իջաւ, դռնէն դուրս ելաւ յարմար ու առանձին տեղ մը գտնելու եւ լըւացուելու համար:

Միհրան եւ Միսաք, նոյնպէս կանուխ արթնցած, գինետուն գացած էին Բարսեղ աղային վրայ տեղեկութիւն առնելու համար: Գինեպանը յայտնած էր անոնց, թէ շատ խնամք տարած էր իրենց հիւրին, թէ մաքուր անկողնոյ մը մէջ հանգիստ պառկած էր Բարսեղ աղան, թէ առաւօտուն ելած մեկնած էր շնորհակալութիւններ յայտնելով այն բարի ծառայութեանց համար, զորս մատուցած էր իրեն: Գինեպանը չէր մոռցած նաեւ յաւելուլ, թէ ինք, իբրեւ գինեպան, պարտաւոր էր իր յաճախորդները ամէն կերպով գոհացնել, թէ որեւէ պատիւ պիտի չզլանար Բարսեղ աղային, եթէ յանձնարարուած իսկ չըլլար:

Միհրան եւ Միսաք շնորհակալութիւն յայտնելով մեկնած էին գինետունէն եւ փողոց մը դարձած, երբ տեսան Բարսեղ աղան, որ աղբիւրի մը առջեւ կեցած թաշկինակովը երեսը կը սրբէր:

— Բարի լոյս, Բարսեղ աղա, գիշերը ի՞նչպէս անցուցիք:

— Շատ հանգիստ: Շնորհակալ եմ, պարոն Միհրան:

— Ես քեզ թող չէի տար երէկ գիշեր, բայց շատ պնդեցիր, գալ շուգեցիր նէ ես ալ ձգեցի:

— Շնորհակալ եմ, Միսաք աղա: Կ'երեւի, որ Գարրիէլ աղան թող չէ տուած զիս:

— Ի՞նչ․․․

— Երէկ գիշեր ո՞ւր մնացիր:

— Առտու ինքզինքս Գարրիէլ աղային տունը գըտայ... շատ գէշ աւրուած եմ եղեր, Գարրիէլ աղային տունը ինտոր երթալս չեմ գիտեր կոր... վրաս գլուխս ալ աղտոտած եմ:

— Ստամո՞քսդ աւրուեցաւ:

— Այո՛:

— Գարրիէլ աղան ալ կու գայ կոր:

— Իրաւ որ մարդուն երեսը նայելու կ'ամչնամ կոր. վերմակը, սաւանը, բարձը լուացուելու են այսօր:

— Բարեւ ձեզ:

— Աստծու բարին, Գարրիէլ աղա:

— Ներեցէք, Գարրիէլ աղա, չեմ գիտեր ի՞նչպէս ներումն խնդրել:

— Ներման բան չկայ, միայն թէ անձիդ վնաս մը չգայ, մեզի համար բան չկայ. չես կրնար վերցնել նէ մի՛ խմեր, եղբայր, մեղք չե՞ս:

— Անանկ չէ՞, Մի՛հրան աղա:

— Անանկ է:

— Էշը, կ'ըսեն, չկերած խոտն ուտէ նէ գլխու ցաւ կ'ունենայ,— ըսաւ Միսաք աղան խնդալով:

Յետոյ ներումն խնդրեց, թէ իր կամքէն անկախ պարագաներով բերնէն փախցուցած էր այդ նմանութիւնը:

— Մենք օղին քու կին կոկորդդ ի վար չթափեցինք ա՛, չեմ կրնար խմել կ'ըսես կը լմննայ:

— Բունի ո՞վ կրնար խմցնել քեզի:

— Իրաւունք ունիք:

— Ես,— ըսաւ Միհրան,— մէկու մը վրան չեմ իյնար, որ խմէ:

— Ես ալ այդ բնաւորութիւնն ունիմ:

— Քու աղէկութեանդ համար կ'ըսենք կոր մենք:

— Անանկ է եա՛, կ'ուզես նէ տակառ մը օղի խմէ:

— Դուք չէի՞ք, որ ստիպեցիք զիս խմելու:

— Մենք ի՞նչ գիտնանք, որ դուն վարժուած չես:

— Մատուրնիս չպիտի հոտուրտայինք ա՛:

— Աս բան մը չէ, անգամ մը կը գինովնայ մարդ, ուրիշ անգամ կը զգուշանայ. ցաւալի կէտն այն է որ...  
— Բարձը, վերմակը, սաւանը աղտոտեցի...  
— Ան ալ բան մը չէ, կը լուացուին, կը սրբուին. հօրս հետ, որ հիւանդ է, քեզի համար կոխու ընելու ըստիպուեցայ:

— Հայրդ իմացե՞ր է որ...  
— Իմացեր է հապա՛. դուն գիշերն ելիր ու խմէ խեղճ մարդուն... մէզը:

— Մէ՞զը մի...  
Բարսեղ աղան կը թքնէ:

— Մէզը հապա՛... թքնելու բան չկայ, ինչ եղաւ նէ մեզի եղաւ. բժիշկները պիտի քննէին այսօր այդ մէզը, երեք օր է, որ խնամով կը պահէի սենեակիս մէջ, սեղանիս վրայ, այս առտու բժիշկներուն ցոյց տալու համար: Ա՛յնչափ բարկացայ, ա՛յնչափ բարկացայ որ... իմ գիտցածս՝ մարդ մը օղի չի կրնար տանիլ նէ խմելու չէ, քու անձիդ ալ կը վնասես, եղբայր:

Բարսեղ աղան կը շարունակէ թքնել:

— Իրաւունք ունի Գարրիէլ աղան:

— Չէ նէ եկուր տունս պառկէ, շաքաթներով կեցիր, գլխուս վրայ տեղ ունիս:

Միշտ կը թքնէ Բարսեղ աղան:

— Իմ ալ գլխուս վրայ:

— Ինչ որ է, եղածը եղած է, քալենք. հո՞ս պիտի կենանք:

Թքնել է չի դադրիր Բարսեղ աղան:

Մինչեւ շուկայ մէկտեղ գացին չորս բարեկամները, յետոյ իրարմէ բաժնուեցան:

— Թո՛ւ անկիրթ մարդ, — պոռաց Բարսեղ աղան, երբ առանձին մնաց, — բռնի օղի խմցուցին. ստամոքսս աւրեցին, մէզ խմելու պատճառ տուին եւ հիմա, փոխանակ ներումն խնդրելու, ինձի խրատ կու տան, որ մէյ մըն ալ օղի չխմեմ: Այդ գարշելի մէզը խմե՞լս հապա... ո՛վ գիտէ ինչ բաներ կային մէջը... Թո՛ւ... միայն մէզին համար կը ցաւին կոր, իբրեւ հօրը հաղարջի օշարակը խմած ըլլամ... Թող նորէն միզէ, էֆէնտիմ, աս ալ դժուար բա՞ն մըն է... Ի՛նչ երես... չ՛ըսեր կոր, որ «այս ի՛նչ պատիկութիւն եղաւ, խեղճ մարդուն մէզ խմելուն պատճառ եղանք, աս ի՛նչ ամօթ բան եղաւ». ամենեւին, հօրս մէզը կ՛ըսէ կ՛երթայ... այսչափ անկրթութիւն չէի կրնար երեւակայել: Թող հօրը մէզը յախճապակեայ ամանի մը մէջ լեցնէր ու վարդի փունջեր ալ դնէր այդ ամանին մէջ ընդունելութեան սրահը, մեծ հայելիին առջեւ դնէր անպիտա՛ն...

Եւ թքնելով շարունակեց ճամբան: